

Անտես չէիր կրնար ընել նաև ֆիզիքական դաստիարակութիւնը. մասնաւոր թէ որբերէն մաս մը արդէն իսկ գրուած սկաւռտական կազմին՝ պարտականութիւնն ունէին զանց չընել նոյն իսկ իրենց առանձնական կեանքին մէջ մարմնական մարզանքները, և պահել իրենց մարմինը միշտ ճկուն և միշտ չարքաշ, ըստ հոռմէական առածին՝ « Առողջ միտքը առողջ մարմնոյ մէջ »:

Եւ ահա իրենց դպրոցական ութամսեայ շըջանին վաստակներուն արդիւնքը.

Չորրորդ կարգէն առաջին մրցանակի արժանացաւ ԶՈՎՍԵՎ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ: Երկրորդ մրցանակին արժանացաւ ՌՈՎԱՅԷԼ ՃԱՆԿԵԱՆ: Երրորդ մրցանակին արժանացաւ ԳՐԻԳՈՐ ՊԱՍՏԱՄԲԵԱՆ:

Երրորդ կարգէն առաջին մրցանակին արժանացաւ ՊԵՏՐՈՍ ՆՈՒՐԻԻԱՆ: Երկրորդ մրցանակին արժանացաւ ԶԳՈՍ ՀԵՄԷԱՆ: Երրորդ մրցանակին արժանացան ԶԱՌՈՐ ՄԱՊՈՒՆԵԱՆ և ԱՆՏՈՆ ԹՈՒՐԱՆԵԱՆ:

Երկրորդ կարգէն առաջին մրցանակի արժանացաւ ԿԶԵՄԷ ԳԱՐԱՊԵՆԵԱՆ: Երկրորդ մրցանակին արժանացաւ ԱՐՈՒՆ ՏԱՃԵԱՆ: Երրորդ մրցանակին արժանացան ՄԵԼԵՈՆ ՔՕՔՈՅԵԱՆ և ՄԱՆՈՒԷԼ ԳՈՆՏՈՒՐԱՆԵԱՆ:

Առաջին կարգէն ԿԶԵՄԷ ԹԱՊԵՐԱՆԵԱՆ:

Յետոյ բաշխուեցան վերոյիշեալ աշակերտներուն՝ Ս. Ղազարի Տպարանէն լոյս տեսած զանազան օգտակար հրատարակութիւններ:

Սակայն, ուրախ ենք ըսելու, որ ամենէն զեղեցիկ վարժատուութիւնը այն եղած է՝ որ ՌԷԼԻԱՐԻ Վարչութիւնը սահմանած է անոնցմէ արժանաւորագոյններն անցընել այժմ Ի Մ. — Ռափայէլեան Վարժարան, որպէս զի հոն աւելի արագ և լաւագոյն կերպով արգասաւորեն իրենց ձիրքերն ու միտքը, մեր ազգին կարեւոր ծառայութիւններ մատուցանելու համար փայլուն ապագայով մը:

Ստուգել լաւագոյն խրախուսութեամբ արեւելեանքն և թէ պարզապէս չարքաշ տարեւըջանին մէջ զարի նախաձեռնութիւն մրցանքի պիտի ելլեն իրարու հետը:

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԵՐԸ

ԱՆՈՐ՝ ՈՐ ԽԱՂԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՀԱՍՏԱՏԷ

Ամերիկայի նոր Նախագահը Գուլիք վաւերացուց տարօրինակ մրցում մը. ասոր զաղափարն յղացողն է Եղուարդ Պոզ, որ 100 հազար տոլար խոստացած է անոր՝ որ պիտի թելադրէ Միացեալ Նահանգաց կամ միւս Ազգաց՝ աշխարհիս խաղաղութիւնը հաստատելու և պահպանելու լաւագոյն կերպը: Եղուարդ Պոզի նուէրին հիմնական նպատակն է ամէն երկիրներու մէջ հասարակաց վիճաբանութիւն մը յառաջ բերել Միացեալ Նահանգաց միջազգային յարաբերութեանց վրայ, և Գուլիք կը յուսայ որ կրնայ հետաքրքրական առաջարկ մը ներկայացոյնի: Կոչուողովուած չէ առանձին անհատներու, այլ ամէն տեսակ կազմակերպութիւններու: « խաղաղութեան յատկապիժներ » ուսումնասիրութեանց պիտի ենթարկուին զանազան քննիչ յանձնախումբները՝ որ կը պարունակեն ծանօթ անձնաւորութիւններ այլ: Ասոնց մէջ նաև կը զբոսնուին նախկին Դեսպան Լորտ Տալիս և Պատեւազական Նախարար Սիդմաքի: Յիսուն հազար տոլար անմիջապէս պիտի յանձնուի յանձնախումբէն ընդունուած ծրագրին հեղինակին: Միւս յիսուն հազարը պիտի վճարուի՝ երբ այդ մէկն ունյ յատկագիծը կը վաւերացուի ամերիկեան Երեւակոյտին կողմանէ, և կամ՝ երբ քննիչ յանձնախումբը սոյն յատկագիծը ժողովրդեան համարումն ստացած նկատէ:

ԳՐԱԿԱՆ ԱՄԵՆԱՄԵՐ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Ամերիկեան Պոյ-Սքառտներու Ընկերակցութիւնը կը հաղորդէ 100 հազար տոլարի, կամ ըսենք, աւելի քան երկու միլիոն լիւրայի հիմնարկութեամբ, որ սահմանուած է երկտասարդաց օգտին նուիրուած ամերիկեան լաւագոյն գրքերուն: Նպատակն է տալալիւ ոստիկանական վճարներ և արկածներու արեւոտ պատմութեանը, և անոնց հակառակ՝ սնուցանել երկտասարդական երեւակայութիւնը աւելի առողջ պատմութեանքներով, պահելով միանգամայն բոլոր միւս վէպերը:

